ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԸՆՏՐԵԱԼՆ կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ եւ Կաթուղիկոս ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարք համազգական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ ԷՋՄԻԱԾՆԻ. Առ ամենայն ուխտ Հայաստանեայց Եկեղեցւոյ գտանեցելոց ի Կովկաս, Ձեզ հոգեշնորհ փոխանորդացդ վիճակաց, բարեշնորհ վանահարցդ, Արժանապատիւ աւագ Երիցանցդ, Բարեկրօն Քահանայիցդ, Շնորհունակ Սարկաւագացդ, Ցարգելի Տանուտեարցդ եւ Գիւղապետացդ, հարազատ որդւոց Մայր Աթոռոյ Հայրապետական Օրհնութեամբ յայտ առնեմք.

Սրբազան եւ վեհապանծ յիշատակարանք քրտնաջան Նախահարցն Մերոց եւ պարծանք պարծանաց անցեալ փառաց Մայր Հայրենեաց կիսակործան Տաճարք եւ ամայի Մենաստանք՝ ընդ հանգամանաց ժամանակաց հասեալք ի վերջին քայքայման եւ անհետացման, տանելով եւ սպառելով զնուիրական յիշատակարանս ողորմած եւ ջերմեռանդ բարերարաց, ապաքէն մխիթարութիւն իմն է տեսանել զվաստակս հետաքրքիր Բանասէր Գրասիրաց, որք յանձն առնուն աշխատանօք եւ նեղութեամբ ժողովել զնշխարս մնացեալ յիշատակարանացն այնոցիկ եւ ի լոյս հանել տպագրութեամբ, որով մասնակարարին նիւթ առատ պատմաբան ուսումնասիրաց եւ տան զոհացումն ըղձից հայրենասիրաց հեռաւորաց որոց քաղցր է՝ եթէ ոչ տեսանել աչօք զհայրենին աշխարհն եւ զսրբավայրս, գէթ զանցելոյն նորա փառաց եւ զպարծանաց լսել զբարբառ։

Ի թիւ այնպիսեաց վաստակաւորաց տեսանեմք ի չորից ամէ հետէ նոր ոմն աշխատաւէր, այն է Պ. Երուանդ Լալայեան, խմբագիր Ազգագրական վեցամսեայ հանդիսի, որ քրտնաջան վաստակօք ի լոյս էած զչորեսին հատորս հանդիսին Ազգագրական, Տեղագրական, Հնախօսական եւ Գիտական նոյն բովանդակութեամբ եւ Մեք գիտեմք թէ քանիօն դժուարին է հաւաքումն, դասաւորումն եւ հրատարակութիւն նոցին եւ որչա՞փ կարօտին այնպիսիք ընդհանրապէս հրատարակիչք՝ քաջալերութեան եւ նպաստից, թէ նիւթական եւ թէ բարոյական։

Ըստ նիւթականին Մեք թողումք զայն ի կամս ազգասէր բարերարաց ազգիս, իսկ ըստ բարոյականին որպէս Հայրապետ հայոց, սովին կոնդակաւ պարտիս ի վերայ Ձեր դնեմք, որոց ընթեռնուք եւ տեսանէք զայս, ամենայն կերպիւ սատար հանդիսանալ Պ. Երուանդայ՝ հրատարակչի «Ազգագրական հանդիսի» առ ի ժողովել զյիշատակարանս, զնիւթս ազգագրականս, զբարս ընտանեկանս, զսովորութիւնս նահապետականս եւ այլն. զի եւ նա զտանելով զբարոյական աջակցութիւն ի ձեռնհասից Մերազնէից՝ յարատեւեսցէ յայն ազգօգուտ եւ պիտանի գործ հրատարակութեան։

Եմք եւ մնամք աղօթող վասն այնպիսեաց եւ ցանկացող յառաջադիմութեան եւ բարօրութեան սիրեցեալ ազգիս.

**Մ. Կ. ամ. Հայոց**

Թ. 287
յ 3-ն Մարտի 1899 ամի
և ըստ տոմարիս ՌՅԽԸ
ի Հայրապետութեան Մերում Զ ամի
ի Ք. Տփխիս։